ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՎԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ
(1921—1941)

Վ. Ս. ՄԱՂԱԼՅԱՆ

Վրաստանի հայ մամուլի էջերում լայն տեղ է զբաղեցրել արվեստի զանազան ճյուղերի զարգացման հետ առնչվող խնդիրների քննարկումը։ Հանրապետական ու երկրամասային «Կարմիր աստղ», «Մարտակոչ», «Պրոլետար» և «Խորհրդային Վրաստան» օրաթերթերն ու մյուս պարբերականները 1920—1930-ական թվականներին արծարծել են թատրոնի, կինոյի, կերպարվեստի, երաժշտության ու փիրառական արվեստի հրատապ հարցերը, հայ արվեստագիտությունը բարձրացրել նոր աստիճանի։

Արվեստի խնդիրների այդպիսի լայնածավալ քննարկման համար Թիֆլիսում կային հիմնավոր նախադրյալներ։ Այնտեղ դեռևս անցյալ դարավերջին սկզբնավորվել էր դեղագիտական մամուլ։ 1880 թ. մինչև 1919 թ. լույս էր տեսնում «Տարազ» հանդեսը, որից մեկ տասնամյակ անց՝ 1893 թ., սկսում է հրատարակվել «Թատրոնը»[1]։ Այնուհետև լույս են տեսնում «Հուշարար» (1907—1909) ամսագիրը, «Գեղափնջիկ» (1907—1912) ամսաթերթը և այլն։ Սակայն դրանցից և ոչ մեկը զուտ արվեստագիտական պարբերական չի եղել։ Պարզապես այդ պարբերականները լուսաբանել են գեղագիտությանն առընչվող տարբեր խնդիրներ՝ կապված երաժշտության, ճարտարապետության, թատերական արվեստի և արվեստագիտության այլ ճյուղերի հետ։ Այդ բանը նկատի ունենալով էլ ժամանակի գեղագետ մտավորականությունը մտածում էր ստեղծել արվեստագիտության խնդիրներ արծարծող մի լուրջ պարբերական, մանավանդ որ հայ մամուլի պատմությունն ուներ նման հանդես ստեղծելու շուրջ կեսդարյա փորձ[2]։ Եվ այն եղավ Գարեգին Լևոնյանի հիմնադրած «Գեղարվեստը», որի առաջին համարը լույս տեսավ Թիֆլիսում, 1908 թ. մարտին և անկանոն պարբերականությամբ հրատարակվեց մինչև խորհրդային կարգերի հաստատումը Վրաստանում[3]։

---

1 «Թատրոնը» տպագրվել է մինչև 1905 թ.։

2 Արվեստագիտական խնդիրներ շոշափող հայ առաջին պարբերականը եղել է «Մուսայք Մասյաց» հանդեսը, որը հրատարակվել է Կոստանդնուպոլսում, 1857-ին։ Նրան հաջորդել են «Քնար Հայկական» (Կ. Պոլիս, 1861), «Հավերժահարս» (Զմյուռնիա, 1862), «Օսմանյան երաժշտություն» (Կ. Պոլիս, 1863), «Արաքս» (Պետերբուրգ, 1887), «Անահիտ» (Փարիզ, 1898—1949, ընդհատումներով), «Գեղունի» (Վենետիկ, 1901—1910), «Բանբեր դրականության և արվեստի» (Պետերբուրգ, 1903—1904), «Կռունկ» (Փարիզ, 1904—1905) և այլ պարբերականներ։

3 Արվեստագիտական հանդեսի հրատարակության միտքը Գ. Լևոնյանը հղացել է դեռ անցյալ դարի վերջերին՝ Պետերբուրգում ուսանելու տարիներին։ Հետագայում, 1905-ին, Կոմիտասի հետ էջմիածնում նա նախաձեռնում է իրականացնել իր վաղեմի երազանքը, բայց գրական արդյունքի չի հասնում։ Շուտով Գ. Լևոնյանը էջմիածնից տեղափոխվում է Թիֆլիս, որտեղ և նրան հաջողվում է ստանալ «Գեղարվեստի» հրատարակության թույլտվությունը։ Առաջին տարում (1908) տպագրվել է երկու համար, 1909-ին՝ 3-րդը, 1911-ին՝ 4-րդը, 1913-ին՝ 5-րդը, 1917-ին՝ 6-րդը։ Միայն թե 5-րդ համարը լույս է տեսել Վենետիկում և կոչվել է «Արտասահմանյան բացառիկ թիվ № 1»։ Գ. Լևոնյանը նպատակ է ունեցել նաև այդպիսի մի «արտասահմանյան բացառիկ» համար էլ հրատարակել Ամերիկայում, բայց այդ ծրագիրը չի կարողացել իրականացնել։

«Գեղարվեստի» վերջին՝ 7-րդ գիրքը[4] լույս է տեսել Թիֆլիսում 1921 թ. վերջերին[5]։ Սակայն հայտնի է, որ Գ. Լևոնյանը ցանկություն է ունեցել հանդեսի այդ համարը «հրատարակված տեսնել 1919 թ. գարնանը»։ Նա այդ առթիվ հավաստի ոչինչ չի ասում, այլ միայն «Գեղարվեստի» 6-րդ համարի վերջին էջում ծանուցում է այն մասին, որ «խմբագրվում է 7-րդ գիրքը»։

«Գեղարվեստի» 7-րդ գիրքը, ինչպես տեսանք, լույս է տեսել Վրաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, երբ արդեն պետականացվել էին մասնավոր բոլոր հրատարակությունները, թուղթն ու տպարանները։ Գ. Լևոնյանն այդ ժամանակ արդեն հանդես էր գալիս միայն որպես խմբագիր։ Սակայն երբ ավարտվում էր «Գեղարվեստի» նշված համարի տպագրությունը, Վրաստանի խորհրդային կառավարությունը 1921 թ. նոյեմբերի 27-ի № 80 դեկրետով դարձյալ ազատություն է տալիս մասնավոր հրատարակություններին, և այդպիսով «Գեղարվեստի» տնօրինությունը նորից անցնում է նրա հիմնադրի՝ Գ. Լևոնյանի ձեռքը։ Բայց արդեն ուշ էր, և նա ոչինչ չի կարողանում ավելացնել տպագրվող համարի մեջ։ Նույնիսկ վրան չի նշվում տպագրության տարին։ Սակայն, չնայած դրան, 7-րդ գրքի ընդհանուր ոգին ցույց է տալիս, որ հաստատուն ավանդություններ ունեցող «Գեղարվեստը» միտում ունի դառնալու խորհրդահայ անդրանիկ արվեստագիտական հանդեսը։ Եվ, իրոք, հանդեսի 7-րդ գրքի լույս ընծայումը խոշոր երևույթ էր Վրաստանի գրական-մշակութային կյանքում։ Այն փաստորեն ոչ միայն Վրաստանի, այլև Անդրկովկասի խորհրդահայ առաջին գեղագիտական պարբերականն էր։ Դրանով էլ սկսվում է խորհրդահայ պարբերահանդեսային հրատարակությունների պատմությունը։ «Գեղարվեստի» այդ համարի լույս ընծայումը հուշեց, որ հայ արվեստը չի կարող զարգանալ առանց հատուկ արվեստագիտական պարբերական ունենալու։

«Գեղարվեստը» սոսկ արվեստագիտական հանդես չի եղել։ Նրա էջերում զետեղվել են արվեստի ու գրականության, նկարչության ու ճարտարապետության, թատրոնի ու երաժշտության մասին հոդվածներ, տպագրվել են հայ դասական գրողների երկերը, թարգմանական էջեր, կատարվել են հայ և համաշխարհային մեծանուն նկարիչների ու քանդակագործների ստեղծագործությունների վերատպություններ և այլն։ Այսպիսի լայնածավալ ու բազմաճյուղ հանդես էր «Գեղարվեստը», որն ազդել է մի քանի սերնդի գեղագիտական դաստիարակության վրա։ «Գեղարվեստի» մասին գրվել են առանձին մենագրություններ ու հոդվածներ, այն ըստ արժանվույն գնահատել են հայ բանասերներն ու արվեստաբանները[6]։ Տանք նրա վերջին համարի ընդհանուր բնութագրությունը այնքանով, որքանով այնտեղ արծարծված խնդիր-

---

4 «Գեղարվեստի» 7-րդ համարն ունի «Գրական, գեղարվեստական, երաժշտական պատկերազարդ հանդես» ենթանվանումը։ Խմբագիր-հրատարակիչ՝ Գարեգին Լևոնյան։ Ծավալը՝ 108 էջ, չափը՝ 32×23 սմ, տպաքանակը՝ 1400, տպարան «Սովնարխոզի»։ Հանդեսի այդ համարի տիտղոսաթերթին վրացերեն նշված է՝ «Տպագրություն Վրաստանի կենտրոնական պետական հրատարակչության»։

5 Թ. Հ. Դալստյանը «Գարեգին Լևոնյանը և «Գեղարվեստ» հանդեսը» (Երևան, 1979) մենագրության մեջ (տե՛ս էջ 103, 112) նշում է, որ «Գեղարվեստի» 7-րդ համարը լույս է տեսել 1922 թ., որը չի համապատասխանում իրականությանը։ Գ. Լևոնյանը իր «Հայոց պարբերական մամուլը» լիակատար ցուցակում (Երևան, 1934, էջ 53, № 417) նշում է, որ «Գեղարվեստի» վերջին՝ 7-րդ գիրքը տպագրվել է 1921 թ.։ Պետք է հավատալ հանդեսի խմբագրին։

6 Տե՛ս Թ. Հ. Դալստյան, նշվ. աշխ., Ս. Հարությունյան, Գարեգին Լևոնյան (Պատմա-բանասիրական հանդես, 1971, № 3), Ստ. Թոփչյան, Գարեգին Լևոնյանի էսթետիկայի մի քանի հարցերի մասին (էսթետիկայի հարցեր, Երևան, 1972), նույնի՝ էսթետիկայի հարցերը «Գեղարվեստ» ամսագրում (Սովետական գրականություն, 1973, № 3), ինչպես նաև Գ. Լևոնյանի «Հուշեր» (Երևան, 1959) և «Երկեր» (Երևան, 1963) գրքերի առաջաբանները՝ Ա. Ինճիկյանի և Շ. Գրիգորյանի հեղինակությամբ, և այլն։

ները իրենց շոշափելի դերն են ունեցել խորհրդահայ արվեստի կազմավորման ու զարգացման համար։

«Գեղարվեստի» վերջին գիրքը, նախորդների համեմատությամբ, ծավալով ավելի փոքր է, սակայն նրա բովանդակությունը նախկին համարների նման հարուստ է, պահպանված են նախորդ հատորներում եղած գրեթե բոլոր բաժինները «Գեղարվեստի տեսականը», «Գեղարվեստի պատմականը», «Գեղարվեստի գրականը», «Պատկերահանդես»։ Այս համարը նախապես պայմանավորված է եղել հրատարակել ծավալուն, որը երևում է խմբագրության կողմից տրված ծանուցումից։ Այնտեղ ասված է. «Խմբագրությունը ներողություն է խնդրում «Գեղարվեստի» այն աշխատակիցներից, որոնց նյութերը ընդունված էին այս գրքի համար, բայց, հակառակ իր ցանկության, հանդեսի ծավալը հանկարծակի թեթևացնելու նպատակով, մնացին դուրս»[7]։ «Գեղարվեստի» ծավալը «թեթևացվել» է խորհրդային իշխանության հաստատումից հետո ստեղծված ֆինանսական դժվարությունների, թղթի ու տպագրատեխնիկական միջոցների պակասի հետևանքով։ Այդ են վկայում նաև հանդեսի այդ համարի ցածրորակ տպագրությունը, վատորակ թուղթը և այլն։

Սակայն, չնայած դրան, «Գեղարվեստի» այդ համարը ընդգրկում է արվեստի ու գրականության գրեթե բոլոր ճյուղերը, որոնք են՝ կերպարվեստ (գեղանկարչություն, մանրանկարչություն, քանդակագործություն), ճարտարապետություն, երաժշտություն, թատրոն, պարարվեստ, գրականություն (արձակ, քնարերգություն, դրամատուրգիա), գրաքննադատություն։ Նրանում տպագրված են փիլիսոփայական-գեղագիտական տեսական հոդվածներ և ուսումնասիրություններ։ Դեռ այսօր էլ գիտական արժեք ու մեծ հետաքրքրություն ունեն այդ համարում տպագրված Գ. Լևոնյանի «Ներածություն հայոց գեղարվեստի պատմության», «Գեղեցիկի պաշտամունքը», «Ի՞նչ է գեղագիտությունը (ըստ Է. Վերոնի)», Լ. Մելիքսեթ-Բեկի «Հայերը վրաց հին գրականության մեջ», Գ. Թումանյանի «Հայերը վրաց նոր գրականության մեջ» մեծարժեք հոդվածները։ Առանձին ուսումնասիրություն է նվիրված իսլամական նկարչությանը։

Առավել հարուստ է հանդեսի գրական բաժինը։ Այստեղ իրենց արձակ ու չափածո գործերով հանդես են եկել հայ դասական գրողներ Ալ. Շիրվանզադեն, Հովհ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը, Վ. Տերյանը, Դ. Վարուժանը, Ա. Ջոպանյանը, Ե. Չարենցը, Դ. Դեմիրճյանը։ Տպագրված է նաև Նար-Դոսի «Հենակներով մարդը» մեկ գործողությամբ դրաման։ Համառում ներկայացված են պրոլետարական գրողներ Հ. Հակոբյանն ու Շ. Կուրդինյանը։ Այնտեղ տպագրված են նաև Ա. Մոճռոյանի, Գ. Մելյոյանի, Վ. Առաքելյանի, Լ. Հազարապետյանի, Ա. Տիգրանյանի, Լեյլիի, Պահարեի, Լեռնենցի, Ա. Չարբոի, Ե. Ստամբոլցյանի և Կարա-Դարվիշի ստեղծագործությունները։

Բարձր ճաշակով են ընտրված «Պատկերահանդես» բաժնի գեղարվեստական կտավները և գրաֆիկական գործերը։ Ներկայացված են Գ. Բաշինջաղյանի, Ե. Թադևոսյանի, Վ. Գայֆեճյանի, Գ. Տեր-Մկրտչյանի, Ա. Շահմալյանի, Գ. Օքրոյանի, Ս. Խաչատրյանի, Վ. Շարբաբչյանի, Տարագրոսի և ուրիշների վրձնի ու գրչի աշխատանքները։

«Գեղարվեստի» 7-րդ համարի լույս ընծայումից երկու տարի հետո Գ. Լևոնյանը ձեռնամուխ է լինում հանդեսի 8-րդ և 9-րդ գրքերի հրատարակությանը։ «Մարտակոչ» թերթի 1923 թ. հունիսի 24-ի համարի հայտարարությունների բաժնում ծանուցվում է, որ վերսկսվում է «Գեղարվեստի» հրատարակությունը։ Հայտարարության մեջ տրված են նույնիսկ բաժանորդագրության պայմանները։ Նույն հայտարարությունը տպագրվել է մի անգամ ևս, դարձյալ «Մարտակոչում», նույն թվականի հուլիսի 9-ի համարում։

---

7 Գեղարվեստ, 1921, № 7, էջ 4,

Սակայն «Գեղարվեստի» հրատարակությունն այդպես էլ Թիֆլիսում չի շարունակվում։

Գ. Լևոնյանը 1925 թ. վերջերին, Թիֆլիսից տեղափոխվելով Երևան, պարձյալ ձեռնամուխ է լինում հրատարակելու «Գեղարվեստի» 8-րդ գիրքը։ Կազմակերպում է խմբագրություն՝ խմբվելով ու աշխատակիցներով։ Ի մի են բերվում նախորդ համարներից դուրս մնացած և շարունակաբար տպագրվող աշխատությունները, որոնք դեռևս չէին ավարտվել։ Գ. Լևոնյանը խմբագրության անունից ծանուցում է ուղարկում մի խումբ արվեստագետ հեղինակների, գրողների՝ առաջարկելով աշխատակցել «Գեղարվեստին»։ Ավելորդ չենք համարում բերել այդ ծանուցման տեքստն ամբողջությամբ. «Գեղարվեստի» 8-րդ գիրքը հրատարակության է հանձնվելու առաջիկա դեկտեմբերի սկզբին, Երևանում, և շքեղ հրատարակությամբ լույս պիտի տեսնի 1926 թ. ապրիլին։ «Գեղարվեստի» այս գիրքը բովանդակելու է նյութեր բացառապես Կովկասյան ազգերի և Մոտիկ արևելքի ժողովուրդների կյանքին և մտավոր մշակույթին վերաբերող։ Խմբագրությունը ուրախ պիտի լինի Ձեր աշխատակցությանը «Գեղարվեստի» այս բացառիկ համարում, խնդրելով միաժամանակ նյութ ուղարկելու դեպքում աչքի առաջ ունենալ վերոհիշյալ ժամանակը, ոչ ավելի ուշ, քան մի ամիս»[8]։

Գ. Լևոնյանը 1925—1926 թթ. ծանուցումներ է ուղարկել Երևանում, Թիֆլիսում և այլուր բնակվող հեղինակներին, ինչպես Նար-Դոսին, Մարտիրոս Սարյանին, Գարեգին Հովսեփյանին, Մարգար Ավետիսյանին և շատ ուրիշների։ Սակայն որոշ դժվարությունների և թղթի պակասի պատճառով ձգձգվում է հիշյալ համարի տպագրությունը։ Դրան էլ ավելանում է հայոց լեզվի մեջ այդ ժամանակ ուղղագրական բարեփոխումներ կատարելու հարցը, և Գ. Լևոնյանը որոշում է սպասել ու «Գեղարվեստի» հերթական գիրքը հրատարակել ուղղագրության նոր կանոններով։ Նոր ուղղագրությունը շուտով սկսում է գործել, սակայն, ցավոք սրտի, հանդեսի 8-րդ համարն այդպես էլ լույս աշխարհ չի գալիս։ 1932-ին Երևանում հիմնադրվում է «Խորհրդային արվեստ» հանդեսը, որը շարունակելու է գալիս հանրահայտ «Գեղարվեստին» և հարստացնելու նրա ավանդույթները։

Ութսուներեք տարի է անցել «Գեղարվեստ» հանդեսի անդրանիկ համարի լույս ընծայումից և ուղիղ յոթանասուն՝ նրա վերջին գրքի տպագրությունից։ Այդ ընթացքում Հայաստանում, ինչպես նաև Սփյուռքում հիմնադրվել են մի շարք արվեստագիտական պարբերականներ, լույս են տեսել հարյուրավոր գեղագիտական տարեգրքեր ու ժողովածուներ, որոնք հարստացրել են հայ նորագույն և սփյուռքահայ մամուլի պատմությունը։ Սակայն «Գեղարվեստի» հրատարակված յոթ գրքերը այսօր էլ չեն կորցրել իրենց գեղագիտական արժեքը և արվեստագիտության հարցերով զբաղվող յուրաքանչյուր անձի համար դարձյալ մնում են գեղեցիկն ընկալելու, նրա հիմունքներին ծանոթանալու չգերազանցված օրինակներ։

Խորհրդահայ իրականության մեջ արվեստագիտական պարբերական ստեղծելու ճանապարհին կարևոր փորձ պետք է համարել «Խելովնեբա-Արվեստ» հանդեսի հայոց [illegible] առաջին [illegible] միակ համարի լույս ընծայումը Թիֆլիսում, 1926 թ. Հ. Ցոլաքյանը գրում է, որ 1926 թ. մարտ-մայիս ամիսներին «Խորհրդային Հայաստան» թերթը հրատարակում էր երկշաբաթյա մի հավելված (8 էջանոց), որը արվեստի [illegible] պարբերականի նախատիպն էր խորհրդային հայ մամուլի պատմության մեջ[9]։ Մասնավորապես ընդունելով այս կարծիքը, նշենք, որ խորհրդահայ իրականության մեջ լույս տե-

---

[8] Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Գարեգին Լևոնյանի ֆոնդ, № 1183, ինչպես նաև հետագա՝ 1185, 1193, 1194 թվակիր նյութերն ու նամակները։ Այս մասին տե՛ս նաև Թ. Հ. Գ ա լ ս տ յ ա ն, նշվ. աշխ., էջ 111։

[9] Հ. Հ. Ց ո լ ա ք յ ա ն, Հայաստանի պարբերական մամուլը սոցիալիզմի կառուցման պայքարում, Երևան, 1970, էջ 499։

ած հայերեն արվեստագիտական պարբերականի նախատիպը կարելի է համարել «Խելովնեբա-Արվեստ» ամսագրի 1926 թ. փետրվարյան այդ միակ համարը։

Վրաստանի գեղարվեստի աշխատողների միության «Խելովնեբա» («Արվեստ») հանդեսը հիմնադրվել է 1924 թ., որի խմբագիրն էր Սանդրո Քուրիձե (Քուրիձե)։ Այն շոշափում էր միայն արվեստաբանական հարցեր։ Տպագրվում էր վրացերեն, սակայն անդրադառնում էր նաև հայ մշակույթի խնդիրներին, թատերախոսականներ ու այլ նյութեր էր զետեղում թիֆլիսահայ մշակութային կյանքից, մնկարչական ցուցահանդեսներից, թատերական ներկայացումներից, առանձին արվեստագետների ու դերասանների մասին տալիս հաղորդումներ։

«Խելովնեբա» հանդեսի 1926 թ. փետրվար ամսվա 25-րդ համարը հոբելյանական է, որն ամբողջությամբ նվիրված էր Վրաստանի գեղարվեստի աշխատողների միության ստեղծման 5-րդ տարեդարձին և հրավիրվելիք VI համագումարին։ Այդ համարը տպագրվել է երկու լեզվով՝ հայերեն և վրացերեն։ Ինչպես երևում է հայերեն տարբերակի առաջնորդողից, նրա՝ որպես ինքնուրույն հայերեն հանդեսի լույս ընծայումը պետք է շարունակվեր։ Սակայն ինչ-ինչ պատճառներով այդ համարի տպագրությունից հետո նրա հրատարակությունը չի շարունակվել։

«Խելովնեբա-Արվեստ» հանդեսի հիշյալ հայերեն տարբերակն ունի շքեղ նկարազարդումներ։ Նրա խմբագիրն էր Պահաբեն (Հայկ Պետրոսյան), իսկ վրացերեն տարբերակինը՝ Սանդրո Քուրիձեն[10]։

Հանդեսի «Խելովնեբա» հայատառ վրացերեն վերնագրի տակ թարգմանաբար տրված է նաև «Արվեստ» հայերեն գլխագիրը, որի տակ՝ «Ամսաթերթ Վրաստանի գեղարվեստի աշխատողների միության» ենթանվանումը։ Այն վրացերենի կրկնօրինակը չէ, այլ առանձին ինքնուրույն հանդես է, որն ունի իր արծարծած հարցերի շրջանակները։

«Խելովնեբա-Արվեստ» հանդեսի առջև ծառացած խնդիրների մասին նրա խմբագիր Ս. Քուրիձեն «Մեր միության հնգամյակը և վեցերորդ համագումարը» վերտառությամբ առաջնորդողում գրում է. «Մեր հանդեսի խնդիրները որոշ են, բայց այն, որ նա յուսադրանում է մեր միության պրոֆեսիոնալ հարցերը, ծառայում է նաև արվեստի բոլոր ճյուղերին Վրաստանում։ Մեր հանդեսը չի կարող պատկանել որևէ խմբակցության կամ ուղղության։ Նա, որպես միության օրգան, պետք է պատկանի արվեստի տեսակներին։ Եվ ապագայում էլ մեր հանդեսը պետք է շարունակի իր ուղին, նպատակ դնելով արվեստը դարձնել աշխատավորության գործը, մոտեցնել մասսաներին և ղեկավարել նրանց կուլտուրական ու ստեղծագործական աշխատանքները»[11]։ Հեղինակը նշում է նաև, որ միության ամենակարևոր խնդիրներից մեկը պետք է լինի ազգային փոքրամասնությունների արվեստներին մեծ ուշադրություն դարձնելը։ Նա իր մեկ այլ՝ «Աշխատանքի հինգ տարին» վերտառությամբ

---

10 «Խելովնեբա-Արվեստն» ունի «Ամսաթերթ Վրաստանի գեղարվեստի աշխատողների միության» ենթանվանումը։ Ծավալը՝ 20 էջ է, չափը՝ 31×24 սմ։ Տպաքանակը՝ 500։ Այս հանդեսը ներկայումս էլ շարունակվում է հրատարակվել վրացերեն՝ որպես Վրաստանի մշակութային նախարարության օրգան։

«Խելովնեբա-Արվեստ» հանդեսը թե՛ Գ. Լևոնյանի «Հայոց պարբերական մամուլը» մատենագիտության մեջ (տե՛ս էջ 132, № 1202) և թե՛ Ա. Կիրակոսյանի «Հայ պարբերական մամուլի մատենագիտությունում» (տե՛ս էջ 300, № 1984) ներկայացված է որպես վրացերեն ամսագիր և նրանում, իբր, հայերեն նյութերը կազմում են առանձին բաժին, որը ճիշտ չէ։ Ինչպես տեսանք, ամսագրի հայերեն տարբերակը լույս է տեսել առանձին համարով։ Գ. Լևոնյանի մատենագիտական ցուցակում աղավաղված է ներկայացված նաև խմբագրի ազգանունը՝ Ս. Կուլիկե (տե՛ս Գ. Լևոնյան, Հայոց պարբերական մամուլը), որը նույնությամբ փոխանցվել է նաև Ա. Կիրակոսյանի մատենագիտության մեջ։

11 Խելովնեբա-Արվեստ, 1926, № 25, էջ 4։

հոդվածում ընդգծում է, որ արվեստի խնդիրը ոչ թե մասսաներին միայն զբաղեցնելն է, այլ նրանց դաստիարակելն ու կազմակերպելը։

«Խելովներան» մինչև վերջ էլ ծառայում է այդ նպատակին։ Նրա հայերեն տարբերակի հրատարակությունը ևս նպատակամղված է այդ ծրագրի իրականացմանը և կոչված է աշխուժացնելու հայ մշակութային վյանքը Վրաստանում։ Այդ համարի լույս ընծայումը զուգադիպում է հանդեսի ստեղծման տարեդարձին և Վրաստանի գեղարվեստի աշխատողների միության ստեղծման 5-ամյակին։

Հանդեսի այդ համարի էջերում լայնորեն քննարկվում է Վրաստանի արվեստի աշխատողների գործունեությունը անցած հինգ տարիների ընթացքում, ցույց է տրվում նաև, թե հանրապետության գեղարվեստի գործիչները ինչպիսի նվաճումներով են դիմավորում իրենց VI համագումարը։

«Խելովներա-Արվեստում» մի շարք արժեքավոր նյութեր ու լուսանկարներ են տպագրված Թիֆլիսի թատերական հարուստ կյանքի վերաբերյալ։ «Հայկական թատրոնը Թիֆլիսում Վրաստանի խորհրդայնացումից հետո» և «Ռուսական թատրոնը Թիֆլիսում» հոդվածները[12] արժեքավոր շատ տեղեկություններ են պարունակում 1920-ական թվականների Թիֆլիսի հայկական, վրացական և ռուսական թատրոնների ու դրանց անվանի գործիչների մասին, տալիս են մշակութային այդ կարևոր օջախների ստեղծագործական կապերի պատմությունը, նրանց զարգացման հեռանկարները։ Առաջին հոդվածը ամբողջական պատկերացում է տալիս Վրաստանի խորհրդահայ թատրոնի առաջին հնգամյակի (1921—1926) գործունեության մասին, վերլուծում է նրա կարևոր ներկայացումները, ցույց տալիս, թե ինչպես այն աստիճանաբար իր ամուր տեղն է գրավում ոչ միայն վրացահայ, այլև ողջ խորհրդահայ թատերական կյանքում։ Հոդվածում բնութագրված է նաև հայ ականավոր թատերական գործիչներ Լ. Քալանթարի, Ա. Գուլակյանի, Ստ. Քափանակյանի, Ս. Ալիխանյանի և ուրիշների բեմական գործունեությունը։

Հայ մեծ դրամատուրգ Գ. Սունդուկյանի ծննդյան 100-ամյակին է նվիրված Հ. Սուրխաթյանի հոդվածը, որտեղ զետեղված են նաև մեծ դրամատուրգի լուսանկարները։ Հոդվածի հեղինակը դրամատուրգի կյանքից ու գործունեությունից վերցրած մի շարք փաստերի և նրա ստեղծագործությունների նորովի վերլուծությամբ վեր է հանում հայ ռեալիստական դրամատուրգիայի հիմնադրի այն հսկայական դերը, որ նա կատարել է Թիֆլիսի գրական-թատերական կյանքում։

«Խելովներա-Արվեստը» «Մեր հոբելյարները» բաժնում նշել է նաև Արմեն Արմենյանի, Իսահակ Ալիխանյանի թատերական գործունեության 30-ամյակը, Գ. Տեր-Դավթյանի, Օլգա Գուլազյանի՝ 25, Հ. Տեր-Դավթյանի՝ 60։ «Մեր կորուստները» բաժնում տպագրվել են Արամ Վրույրի, Տիկին Զաբելի և Մացակ Տեր-Առաքելյանի հիշատակներին նվիրված մահախոսականները, որոնցում արժեքավորված է նրանց վաստակը հայ արվեստի ու թատրոնի զարգացման գործում։ Վրաստանի խորհրդահայ թատրոնի 1920-ական թվականների առաջին կեսի պատմությունը ամբողջացնում են հանդեսում տպագրված մյուս նյութերը, որոնց թիվն անցնում է մեկուկես տասնյակից։ Բոլոր այդ նյութերն ուղեկցված են արժեքավոր լուսանկարներով, վիճակագրական՝ տվյալներով, ծանոթագրություններով, որոնք ավելի են բարձրացնում հանդեսի ճանաչողական ու գիտական նշանակությունը։ Հիշատակելի է Թիֆլիսի ակադեմիական պետհայդրամայի 1925—1926 թթ. թատերաշրջանի ամբողջ անձնակազմի խմբակային լուսանկարը, որը լիարժեք պատկերացում է տալիս վրացահայ թատրոնի գերազանց ուժերի մասին։

«Խելովներա-Արվեստ» հանդեսը Գ. Լևոնյանի «Գեղարվեստի» վերջին՝ 7-րդ գրքից հետո խորհրդային կարգերի օրոք Թիֆլիսում լույս տեսած արվեստագիտական առաջին լուրջ պարբերականն էր։ Ցնայած լույս է տեսել

---

12 Առաջին հոդվածը ստորագրված է «Հ», իսկ երկրորդը՝ «Ալկեյ»։

«Խելովնեբա-Արվեստի» հայերեն միայն մեկ համար, այդուհանդերձ զգալի է նրա դերը վրացահայ մշակութային-թատերական կյանքում։ Այն իր ուրույն տեղն ունի ոչ միայն վրացահայ, այլև խորհրդահայ արվեստաբանական մամուլի պատմության մեջ։

«Խելովնեբա-Արվեստ» հանդեսի լույս ընծայումից մեկ տարի անց՝ 1927 թ. Թիֆլիսի Հայարտունը (Հայ արվեստի տուն) հիմնադրում է «Լուսաբաց» գրական-գեղարվեստական տարեգիրքը[13]։ Նրա տպագրությունը շարունակվել է մինչև 1931 թ. և լույս է տեսել ընդամենը 6 համար[14]։

Գրական ստեղծագործություններից բացի, «Լուսաբացը» լայն տեղ է հատկացրել նաև արվեստի խնդիրներին։ Հանդեսն ուներ «Նկարչական» և «Երաժշտական» բաժինները։ Առաջինում զետեղվել են Մ. Սարյանի, Գ. Շարբաբչյանի, Գ. Գրիգորյանի (Ջիոտտո), Ռ. Լոռիս-Մելիքյանի, Մ. Մարդարյանի, Հովհ. Կարալյանի, Գ. Գյուրջյանի, Ու. Քոչարյանի, Ս. Թարյանի, Տարագրոսի գեղանկարներն ու գրաֆիկական գործերը, իսկ երկրորդում՝ Ա. Տիգրանյանի, Վ. Տալյանի, Կ. Զաքարյանի, Ա. Մանուկյանի և ուրիշների նոտագրված երգերը։ Այդ ամենը տարեգրքի խմբկոլը կատարել է նվիրումով ու մեծ բծախնդրությամբ, հեղինակների ստեղծագործություններն ընտրվել են խնամքով, որոնք միտում ունեն տալու Վրաստանի գրական-մշակութային կյանքի այն ժամանակվա լիարժեք պատկերը։ Հանդեսի գրեթե բոլոր համարների ձևավորումը ևս կատարված է ճաշակով ու վայելուչ, վերատպությունները՝ որակով։ «Լուսաբացը» ևս իր որոշակի դերն է կատարել Վրաստանի խորհրդահայ արվեստի զարգացման գործում։

Արվեստի խնդիրներին նվիրված բազմաբնույթ նյութեր են պարունակում ժամանակին երկրամասային ու հանրապետական թերթերին առընթեր լույս ընծայվող շաբաթական ու միամսյա հավելվածները։ Վրաստանում այդպիսի հրատարակություն էր ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի օրգան «Մարտակոչ» օրաթերթի «Մարտակոչ» (1923—1927) շաբաթական հավելվածը։ Դրան հաջորդում են ՎԿ(բ)Կ Կենտկոմի օրգան «Պրոլետար» թերթի «Արվեստ, Գրականություն, Գիտություն» (1928—1929), «Գրական շաբաթ» (1929—1930), «Գրական արշավ» (1930—1931) հավելվածները։

Դրանց մեջ իր բնույթով, որպես արվեստագիտական պարբերական, առանձնանում է «Արվեստ, Գրականություն, Գիտություն» հանդեսը[15]։ Ինչպես վկայում է հավելվածի վերնագիրը, նրա հիմնական խնդիրն էր՝ հնարավորություն տալ արվեստի, գրականության ու գիտության գործիչներին՝ հանդես գալու նրա էջերում, դրանով իսկ նպաստելով մշակույթի նշված ճյուղերի զարգացմանը։ Հիշյալ հավելվածի նպատակն էր գեղարվեստական խոսքի միջոցով մասսայականացնել հանրապետության և ամբողջ Միության ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման ընթացքն ու

---

13 «Լուսաբացը» սկզբում եղել է Վրաստանի գրողների միության, իսկ 1929 թ. 3-րդ համարից՝ Վրաստանի խորհրդային գրողների ֆեդերացիայի հայկական սեկցիայի գրական-գեղարվեստական ժողովածուն։ Խմբագիրը չի նշված, սակայն Ռուբեն Զարյանի վկայությամբ (տե՛ս Ռ. Զ ա ր յ ա ն, Հուշապատում, գիրք 1, Երևան, 1975, էջ 53) նրա խմբագիրը եղել է Արշավիր Մելիքյանը։ Ծավալը 176—200 էջ է, չափսը՝ 26×17 սմ, տպաքանակը՝ 1.000։ Վրացահայ ճանաչված գրող Սերոբ Թորգոմյանը իր «Հուշեր» գրքում (Երևան, 1962, էջ 50) նշում է, որ ինքը և Նար-Դոսը ընտրված են եղել ՎԳՄ հայկական սեկցիայի օրգան «Լուսաբաց» հանդեսի խմբկոլի կազմում, և որ Նար-Դոսը «Վերջին մոհիկանը» պատմվածքը գրել է հենց այդ հանդեսի համար։

14 Արտաշես Մխիթարյանը «Վրաստանի սովետահայ գրականությունը» (Երևան, 1966, էջ 39) գրքում հավաստում է, որ «Լուսաբացն» ունեցել է ընդամենը 5 համար, որն, իհարկե, ճիշտ չէ։

15 «Արվեստ, Գրականություն, Գիտությունը» լույս էր տեսնում շաբաթը մեկ անգամ, միշտ կիրակի օրերը։ Խմբագիրը չի նշված։ Ծավալը՝ 8 էջ, չափսը՝ 31×24 սմ, տպաքանակը՝ 6.500—9.000։

նվաճումները, ընթերցողներին ծանոթացնել մշակույթի բնագավառի ձեռքբերումների հետ։

«Արվեստ, Գրականություն, Գիտությունը» վերոհիշյալ խնդիրների հետ լայնորեն քննարկել է արվեստի հիմնահարցերը, իր էջերում մեծ տեղ հատկացրել գեղագիտության հարցերի արծարծմանը։ Հավելվածի անդրանիկ համարը լույս է տեսել 1928 թ. հունվարի 1-ին, իսկ վերջին՝ 67-րդ համարը՝ 1929 թ. ապրիլի 28-ին։ Շուրջ մեկուկես տարվա գոյության ընթացքում համդեսը տպագրել է Կ. Մարքսի աշխատություններից մի քանիսը, որոնց թվում՝ «Գեղարվեստի մասին», «Ֆոյերբախի մասին» երկերը։

Այս պարբերականն իր էջերում զետեղել է անդրկովկասյան հանրապետությունների ճարտարապետության, քանդակագործության, երաժշտության, ժողովրդական երգերի, նկարչության ու թատերական արվեստի խնդիրներին նվիրված հոդվածներ, ուսումնասիրություններ, առանձին երգերի նոտագրված տեքստեր, գեղանկարչական ու գրաֆիկական գործեր և այլն։ Նրա էջերում կարելի է հանդիպել նաև երկրի մշակութային կյանքի այլևայլ բնագավառների մասին թղթակցությունների, կինոյի, թատրոնի, կերպարվեստի, երաժշտության ու գրականության վերաբերյալ հետաքրքիր նյութերի։ Հիմնականում այսպիսի բովանդակություն ունի «Պրոլետար» օրաթերթի «Արվեստ, Գրականություն, Գիտություն» հավելվածի արվեստագիտության բաժինը։

Այստեղ հարկ ենք համարում նշել, որ Գ. Լևոնյանը իր «Հայոց պարբերական մամուլը» մատենագիտության մեջ նշում է, որ իբրև 1928 թ. Թիֆլիսում լույս է տեսել «Պրոլետար» թերթի «Արվեստ (Գրականություն)» հավելվածը, որը 15-րդ համարից կոչվել է «Գրական շաբաթ»[16]։ Սակայն այդ հավելվածը գտնելու նպատակով մեր որոնումները արդյունք չտվեցին։ Այդպիսի վերնագրով հավելված, մեր կարծիքով, «Պրոլետար» թերթը չի ունեցել։ Դա պարզապես վրիպում է. անվանի գիտնականը «Արվեստ, Գրականություն, Գիտություն» հավելվածը ներկայացրել է երկու անգամ, իրար ետևից, տարբեր վերնագրերով[17]։ Կամ Գ. Լևոնյանի վկայակոչած «Արվեստը» մեզ անծանոթ մի այլ պարբերական է՝ հրատարակված Թիֆլիսում։ Սակայն փաստ է, որ մրա գոյության մասին չի հիշատակված Գ. Լևոնյանի գրքից հետո հրատարակված հայոց պարբերական մամուլին նվիրված և ոչ մի մատենագիտության մեջ[18]։

Սկսած 1931 թ. վերոհիշյալ հավելվածներին փոխարինելու են գալիս «Պրոլետար» (1931—1932), «Գրոհ» (1932—1933) և «Բարձունքներ» (1934) ամսագրերը, որոնք հրատարակում էր դարձյալ հանրապետական «Պրոլետար» օրաթերթը։ Այդ հանդեսների նյութերի վերլուծությունը ցույց է տալիս, որ արվեստի զարգացման խնդիրները մշտապես գտնվել են դրանց ուշադրության կենտրոնում։ Արվեստի հարցերը լայնորեն քննարկվել են նաև 1920-ական թվականներին Թիֆլիսում հրատարակվող «Դարբնոց» (1922—1923), «Կարմիր ծիլեր» (1923—1941), «Դիրքերում» (1924), «Զարթոնք» (1926) հանդեսների ու մյուս պարբերականների էջերում։

1930-ական թվականներին, երբ Հայաստանում արդեն կային արվեստագիտական հանդեսներ («Խորհրդային արվեստ», «Արվեստի ֆրոնտում» և

---

16 Հայոց պարբերական մամուլը. Լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչև մեր օրերը (1794—1934), առաջաբանով, ներածությամբ, ծանոթագրություններով, կազմեց Գ. Լևոնյանը, Երևան, 1934, էջ 142, № 1307։

17 Նույն տեղում, էջ 142, տե՛ս 1307 և 1308 համարների տակ։

18 Հայոց պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա. առաջաբանով և ծանոթագրություններով, երեք հատորով, կազմեց Հովհ. Պետրոսյանը, Երևան, 1954—1957։ Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794—1967). համահավաք ցանկ, կազմեց Ա. Կիրակոսյանը, խմբագրությունը և առաջաբանը՝ Հ. Կոստանյանի և Հ. Սիլվանյանի, Երևան, 1970, Հայ պարբերական մամուլը. մատենագիտական համահավաք ցուցակ (1794—1980), կազմեց Մ. Ա. Բաբլոյանը, Երևան, 1986։

այլն), Վրաստանի հայ մամուլը իր էջերում դարձյալ մեծ տեղ էր հատկացնում արվեստի հարցերին։ Գեղագիտության խնդիրներին նվիրված նյութեր էին տպագրվում «Արշավ» (1932—1941), «Հոկտեմբերյան սերունդ» (1939—1941), «Գրական հանդես» (1941) ամսագրերի ու «Պրոլետար», «Խորհրդային Վրաստան» թերթերի էջերում։

Այսպիսի ուղի է անցել Վրաստանի խորհրդահայ արվեստագիտական մամուլը։ Այն իր շուրջն է համախմբել տեղի նշանավոր արվեստագետներին ու արվեստի խնդիրներով զբաղվող մյուս մտավորականներին, միավորել նրանց ուժերը և իր նպաստը բերել հայ նորագույն արվեստի զարգացման գործին։

АРМЯНСКАЯ ИСКУССТВОВЕДЧЕСКАЯ ПЕЧАТЬ В ГРУЗИИ (1921—1941)

В. С. МАГАЛЯН

Резюме

В истории армянской периодической печати в Грузии свое достойное место занимают те издания, которые почти полностью были посвящены вопросам искусствоведения. Первым искусствоведческим изданием, основанным в Грузии на заре Советской власти, был последний, седьмой номер знаменитого журнала Г. Левоняна «Гехарвест» («Искусство», 1908—1921 гг.). Выход в свет последнего номера «Гехарвеста» зародил идею о создании специального армянского искусствоведческого издания.

Немногим позже, в феврале 1926 г., выходит в свет первый и единственный номер журнала «Хеловнеба-Арвест» («Искусство») на армянском языке, который следует считать первым армянским советским изданием по вопросам искусствоведения в Закавказье.

Вопросам искусства уделялось много места в еженедельных и ежемесячных приложениях краевых и республиканских газет «Мартакоч» и «Пролетар», в журналах «Кармир цилер» («Красные ростки», 1923—1941 гг.), «Лусабац» («Рассвет», 1927—1931 гг.), «Аршав» («Натиск», 1932—1941 гг.) и др.